**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-26/20**

ք. Երևան

«27» 03 2026թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ի դեմս Ռեկտոր՝ Հ. Ձաքոյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրությա ն հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 ,աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9,817,500.00 (ինը միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձնման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2470100531030000
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ________________ Հ. Զաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030005130100
ՀՎՀՀ 00807555

Տնօրեն՝ ________________ Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
«27» 03 2026թ. կնքված
ՀԱՀ-ԳՀԾՁԲ-26/20 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը* |
| 1 | 48441300/1 | Ծրագրային լուծումը պետք է ապահովի կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ամբողջական հաշվառում, վերլուծություն և հաշվետվողականություն՝ գործող օրենսդրության և հաշվապահական միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:<br>**Ֆունկցիոնալ պահանջներ՝**<br>**1.Հաշվապահություն**<br>• Դրամական միջոցների հաշվառում<br>• Բանկային փաստաթղթերի համակցում ԻնտերնետԲանկ համակարգի հետ<br>• Գնորդների և մատակարարների տվյալների ավտոմատ ներբեռնում ըստ մուտքագրված ՀՎՀՀ-ի և անվանման (առանց ֆայլերի փոխանակման)<br>• Հայտատուների /նյութական պատասխանատուների/ հաշվառում՝ ըստ հայտերի, կառուցվածքային ստորաբաժանումների և հայտերի բավարարման ժամանակացույցի<br>• Մատակարարների հաշվառում՝ ըստ պայմանագրերի, հաշիվ/ապրանքագրերի և վճարման ժամանակացույցի<br>• Բազմակողմ ֆինանսական վերլուծություն<br>• Ֆինանսական պլանավորում<br>• <u>**Ֆինանսական(պարտադիր4 ձևերը)**</u> և հարկային հաշվետվություններ()<br><br>**2.Հիմնական միջոցներ**<br>• Հիմնական միջոցների ֆինանսական և հարկային հաշվառման հնարավորություն<br>• Հիմնական միջոցների առանձնացված քանակագումարային վարում՝ ըստ գույքահամարների և գույքային քարտերի | հատ | 9,817,500.00 | 1 | ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրացուցային օրվա ընթացքում: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | • Հիմնական միջոցների առանձնացված քանակագումարային վարում՝ ըստ նյութական պատասխանատուների<br>• Հիմնական միջոցների հետ բոլոր գործարքների գրանցում՝<br>• Հիմնական միջոցների ձեռքբերում<br>• Հիմնական միջոցների շահագործման հանձնում<br>• Հիմնական միջոցների ժամանակավորապես շահագործումից հանում<br>• Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկ՝ տարբեր մեթոդներով<br>• Հիմնական միջոցների միավորում<br>• Հիմնական միջոցների տրոհում<br>• Հիմնական միջոցների մասնակի տրոհում<br>• Հիմնական միջոցների վերակառուցում<br>• Կապիտալ և ընթացիկ վերանորոգումների հաշվառում<br>• Հիմնական միջոցների վերագնահատում, հավելյալ ծախսերի հաշվառում<br>• Հիմնական միջոցների դուրսգրում /լուծարում/<br>• Ի պահ հանձնված հիմնական միջոցների հաշվառման վարում<br>• Հիմնական միջոցների վերագնահատում, հավելյալ ծախսերի հաշվառում, գույքագրում<br>• Հիմնական միջոցների գույքագրում, ինչպես նաև գույքագրում գծիկավոր կոդի սկաներների միջոցով<br><br>**3. Ապրանքանյութական արժեքների հաշվառում պահեստներում**<br>• Նկարագրում է նյութական արժեքների քարտարանը<br>• Նյութերի մուտք<br>• Նյութերի տեղաշարժ<br>• Նյութերի ծախսագրում<br>• Նյութերի վերագնահատում<br>• Նյութերի վրա հավելյալ ծախսերի բաշխում<br>• Նյութերի գույքագրում ինչպես անվանական, այնպես էլ շտրիխ կոդերի հիման վրա<br>• Արագամաշ առարկաների հաշվառում<br>• Ի պահ հանձնված նյութականի հաշվառում<br>• Նյութերի ի պահ հանձնում<br>• Ի պահ հանձնված նյութերի ըստ գործընկերների հաշվառման վարում<br>• Ի պահ հանձնված նյութերի վերագնահատում<br>• Ի պահ հանձնված նյութերի ծախսագրում<br>• Ի պահ հանձնված նյութերի իրացում<br>• Ծառայությունների մատուցման և մանրածախ առևտրի իրականացում<br>• Գնացուցակների կիրառում՝ ըստ օգտագործողների հասանելիությունների<br>• Գների փոփոխման պատմությանը հետևելու հնարավորություն | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | • Գների սահմանում որոշակի ժամանակահատվածով կամ անժամկետ<br>• Զեղչերի կիրառում՝ ըստ գործընկերների, գործընկերների խմբի կամ ապրանքների խմբի<br>• Մանրածախ օրդերների մուտք<br>• Մանրածախ օրդերների հիման վրա ինչպես առանձին, այնպես էլ ամփոփ դրամարկղի մուտքի օրդերներ ստեղծելու հնարավորություն<br>• Մանրածախ օրդերների հիման վրա ՀԴՄ կտրոններ տպելու հնարավորություն՝<br><br>**4.Աշխատավարձի հաշվարկ**<br>• Նկարագրել կազմակերպությունում գործող հավելումները և պահումները<br>• Նկարագրել աշխատաժամանակի տեղեկագրերի (տաբելների) տեսակները (8 ժամյա, 4 օրյա, ժամավճար և այլն)<br>• Կատարել դրույթների համապատասխանեցում օրենսդրությանը (եկամտային հարկի և նպատակային սոցիալական վճարի սանդղակներ, նվազագույն աշխատավարձը և այլն)<br>• Հաստատել կադրային փաստաթղթերը<br>• Գրանցել հետևյալ գործողությունները.<br>- Աշխատավարձի հաշվարկ<br>- Արձակուրդայինի հաշվարկ<br>- Վերջնահաշվարկ (չօգտագործված արձակուրդի փոխհատուցման գումարի հաշվարկ)<br>- Նպաստների հաշվարկ (հիվանդության նպաստ, պրոթեզավորման նպաստ, առողջարանային բուժման նպաստ, մայրության նպաստ, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ)<br>- Ամսվա ընթացքում մեկից ավելի վճարումներ<br>- Կատարել ծախսերի ձևակերպումներ<br>- Աշխատաժամանակի բաշխում<br>• Ստանալ հաշվետվություններ՝<br>- Վճարացուցակներ<br>- Վճարային տեղեկագրեր<br>- Հաշվարկային թերթիկներ<br>- Ամփոփ տվյալներ<br>- Ամփոփ տվյալներ ըստ աշխատակիցների<br>- Միջին ամսական տվյալներ<br>- Հաշվարկային տվյալների շախմատաձև տեղեկագիր<br>- Հաշվարկային տվյալներ՝ ըստ աշխատակիցների, ստորաբաժանումների, հավելումների/պահումների<br>- Աշխատողի և քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցողի գրանցման հայտ<br>- Եկամտային հարկի ամփոփ հաշվարկ: | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **5.Կադրերի հաշվառում**<br>• Գրանցել աշխատակիցների անձնական տվյալները.<br>- Ծննդյան ամսաթիվ, ծննդավայր<br>- Սեռ, ընտանեկան վիճակ<br>- Ընտանիքի անդամների տվյալներ (անուն, ազգանուն, ծննդյան ամսաթիվ)<br>- Նույնականացման փաստաթղթի տեսակ, համար<br>- Հանրային ծառայության համարանիշ<br>- Հաշվառման և բնակության հասցեներ<br>- Աշխատանքային գրքույկի համար<br>- Կրթության տվյալներ (մասնագիտություն, դիպլոմի տվյալներ, գիտական կոչումներ)<br>- Լրացուցիչ (զինապարտության վիճակ, հեռախոսահամարներ)<br>• Գրանցել աշխատանքային պայմանագրերով սահմանված պայմանները և փաստաթղթերի միջոցով հետևել դրանց փոփոխություններին.<br>- Ստորաբաժանում<br>- Պաշտոն<br>- Աշխատավարձի դրույքաչափ<br>- Փորձաշրջանի ավարտ<br>- Պայմանագրի տեսակ, պայմանագրի գործողության ժամանակահատված<br>• Աշխատանքային տարբեր խմբերի համար սահմանել արդյունավետության ցուցանիշներ (KPI)<br>• Նկարագրել կազմակերպության կառուցվածքային միավորների (ստորաբաժանումների) հիերարխիկ կառուցվածք<br>• Գրանցել հետևյալ գործողությունները<br>- Ընդունման հրաման<br>- Ազատման հրաման<br>- Աշխատանքային պայմանագրեր<br>- Գործուղման թերթիկներ<br>- Բացակայության փաստերի, արտաժամերի, հանգստյան և տոն օրերին աշխատած ժամերի գրանցում<br>- Գիշերային աշխատանքի ժամերի գրանցում<br>- Տաբելի թերթիկի (հաճախումների) հաստատում<br>- Արձակուրդի հրամաններ և պլանավորում<br>- Ժամանակավոր անաշխատունակության նպաստի հրաման<br>- Հավելումների հրամաններ<br>- Պահումների հրամաններ<br>• Կազմակերպել մրցութային ընթացակարգը և ունենալ համալիր տեղեկատվություն մասնակիցների վերաբերյալ<br>• Նկարագրել և հետևել հաստիքացուցակներին ըստ ստորաբաժանումների | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | • Նկարագրել աշխատանքները և աշխատանքային պարտականությունները<br>• Նկարագրել աշխատակիցների հմտությունները, ուսուցման հետ կապված փաստերը<br>• Գրանցել ուսուցման (վերապատրաստման) ընթացքի հետ կապված ծախսերը<br>• Ստանալ հաշվետվություններ՝<br>- Աշխատակիցների կադրային թերթիկներ<br>- Հրամանների գիրք<br>- Աշխատակիցների հաճախումների (տաբելների) փաստաթղթեր<br>- Աշխատանքային առաջադիմություն<br>- Աշխատակիցների ստաժի տվյալներ<br>- Արձակուրդներ ըստ աշխատակիցների (ժամանակահատվածի համար հասանելի, օգտագործված և չօգտագործված օրեր)<br>- Աշխատակիցների գործող աշխատավարձը<br>- Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր<br>- Աշխատակիցների շրջանառություն<br>- Աշխատանքի պահանջների և փաստացի տվյալների համեմատում<br><br>**6.Ավտոտնտեսություն**<br>• Գրանցել ավտոմեքենաների և վարորդների մասին տեղեկությունները<br>• Հետևել վառելիքի քանակային հաշվառմանը՝ ըստ ավտոմեքենաների և վարորդների՝ ստեղծելով վառելիքի լիցքավորման, ընդունման-հանձնման և ծախսագրման փաստերը<br>• Ամենօրյա կամ ամփոփ ուղեգրերի հիման վրա կատարել նորմայով ծախսվող վառելիքի դուրս գրում, նաև ստանալ վառելիքի գերածախսը կամ խնայումը<br>• Կատարել ավտոմեքենաների պլանավորած նորոգումների հաշվառում՝ հետևելով նյութածախսերին և կատարված աշխատանքներին<br>• Մուտքագրել ավտոմեքենաների վազքաչափերը և վերջնական ցուցիչները ըստ ուղեգրերի և նորոգումների հաշվետվությունների<br>• Նորոգումների վերլուծություն՝ համեմատել փաստացի կատարված և նորմաներով պլանավորված նորոգումների պարբերականությունը և վազքաչափերը<br><br>**7. Մասնաճյուղային հաշվառում**<br><br>• Միասնական տվյալների բազա<br>• Տվյալների կենտրոնացված կառավարում<br>• Օգտագործողների միաժամանակյա քանակ՝ առավելագույնը **15** միաժամանակյա օգտագործող՝ որից **6-ը** մասնաճյուղերում: | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **8.Համակարգի այլ ֆունկցիոնալություն**<br>• Համակցում ԻնտերնետԲանկ համակարգի հետ<br>• Համակցում էլ. հարկային հաշիվների և հաշվետվությունների համակարգերի հետ<br>• Համակցում MS Word, MS Excel, Open Office ծրագրերի հետ<br>• Փաստաթղթերի պատմության մանրամասն գրանցում՝ ըստ բոլոր գործողությունների<br>• Փաստաթղթերի հաստատումների նկարագրում, ավտոմատ տեղեկացում էլ. Փոստով<br>• Անմիջապես ծրագրից ինտեգրում E-Invoicing համակարգի հետ (առանց ֆայլերի փոխանակման)<br>• Հատուկ դաշտերի ավելացման հնարավորություն փաստաթղթերում: Ավելացված դաշտերի արտացոլում հաշվետվություններում<br>• Աշխատանքային ժամանակահատվածի ավտոմատ փակման կամ տեղափոխման մեխանիզմ՝ ըստ օգտագործողների<br>• Անսահմանափակ հաշվետվությունների նկարագրման հնարավորություն<br>• Անալիտիկ և սինթետիկ հաշվառում ըստ ստորաբաժանումների<br>• Ռաման վարձերի և կրթաթոշակների հաշվառում:<br>Ելնելով կազմակերպության առանձնահատկություններից և հաշվապահական հաշվառման իրականացման բարդությունից, ծրագրի ներդրման փուլում պետք է ապահովել առնվազն 2 աշխատակցի ամենօրյա ներգրավում:<br>**Ծրագրի օգտագործման լեզուն /ինտերֆեյսը /պետք է լինի ամբողջությամբ հայերեն լեզվով՝ ներառյալ մենյուները, դաշտերի անվանումները ինչպես նաև տպվող ձևերի և հաշվետվությունների վերնագրերը**: Մասնակի հայերեն թարգմանությունը, ինչպես նաև ռուսերեն կամ այլ լեզվով հիմնական աշխատանքային միջերեսը **չի համարվում համապատասխանություն:**<br>Ծրագիրը պարտադիր պետք է ապահովի հաշվետվությունների ձևավորում և արտահանում հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:<br>Ծրագիրը պետք է ներառի **մոբայլ հավելված** (iOS և Android օպերացիոն համակարգերի համար), որը թույլ կտա ղեկավարությանը և պատասխանատու աշխատակիցներին իրականացնել հեռահար կառավարում:<br>Մատուցվող ծառայությունը պետք է պարունակի համակարգի տեղադրման, ներդրման աշխատանքները և ետ ներդրումային սպասարկումը:<br>**Ներդրման և սպասարկման պայմաններ՝**<br>ծրագրի ներդրման շրջանակում Մատակարարը պարտավոր է ապահովել գործող ծրագրային համակարգում առկա հաշվապահական, կադրային և այլ ֆինանսատնտեսական | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տվյալների ամբողջական տեղափոխումը նոր ձեռք բերվող ծրագրային ապահովման միջավայր:<br>Տվյալների միգրացիան հանդիսանում է ներդրման անբաժանելի փուլ և պետք է իրականացվի տվյալների ամբողջականության, ճշգրտության և շարունակականության ապահովմամբ:<br>Միգրացիայի գործընթացը ներառում է՝<br>• տվյալների վերլուծություն և քարտեզագրում,<br>• փորձնական տեղափոխում և ստուգում,<br>• վերջնական տեղափոխում,<br>• արդյունքների համադրություն և հաստատում պատվիրատուի կողմից:<br>Ներդրման, ներառյալ տվյալների միգրացիայի, ընդհանուր տևողությունը կարող է կազմել մինչև առավելագույն **90 աշխատանքային օր** պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից:<br>Մատակարարը պարտավոր է ապահովել առնվազն **1 (մեկ) տարի** ժամկետով տեխնիկական և խորհրդատվական սպասարկում:<br>**Սպասարկումը պետք է ներառի՝**<br>• Համակարգի ընթացիկ շահագործման հետ կապված խորհրդատվություն<br>• Համակարգի լրամշակում և զարգացում կապված օրենսդրության փոփոխման հետ<br>• Համակարգի նոր ֆունկցիոնալ հնարավորությունների մշակում Խորհրդատվություն համակարգի ընթացիկ շահագործման համար անհրաժեշտ ավտոմատացման գործընթացի կազմակերպման, համակարգչային տեխնիկայի և այլ ծրագրային համակագերի հետ ինտեգրացիայի հետ կապված հարցերի վերաբերյալ: | | | | | |

- Ծանոթություն. * Ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 90 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը,բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2470100531030000
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր ______________ Հ.Ջաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 193003000513010
ՀՎՀՀ 00807555

Տնօրեն՝ ______________ Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«21» 03 2026թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-26/20 ծածկագրով պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 48441300/1 | Հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթներ | - | - | 9,817,500.00 | 9,817,500.00 | 9,817,500.00 | 9,817,500.00 | 9,817,500.00 | 9,817,500.00 | 9,817,500.00 | 9,817,500.00 | 9,817,500.00 | 9,817,500.00 | 9,817,500.00 |

Ծանոթություն. Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են ՀԱԱՀ հիմնադրամի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:
Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով և տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2470100531030000
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ____________ Հ.Զաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030005130100
ՀՎՀՀ 00807555

Տնօրեն՝ ____________ Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*«____» _________________ 2026թ. կնքված*
*ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-26/20 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ______________________

հվհհ ______________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ______________________

հվհհ______________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«    » «              » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «              » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«____» _______________ 2026թ. կնքված*
*ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-26/20 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ___________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. __________________ -ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«____» ________________ 2026թ. կնքված*
*ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-26/20 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________ֆինանսական գործակալի անվանումը___________ հայտնում է, որ.

1. _______պատվիրատուի անվանումը___-ի և _________կատարողի անվանումը______-ի միջև «----» ___________ 20 թ. Կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և _____կատարողի անվանումը______-ի միջև «----» ___________ 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

________________________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.